

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ,
ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ»
(Թիւ 2)

ՍՈՒՐԲ
ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2026

ՀՐԱՄԱՆԱԻ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՒԻՆԸ

1) Ի՞նչ է Սուրբ Հաղորդութիւնը:

Եկեղեցին սուրբ Պատարագի ժամանակ, Սուրբ Հոգիով սրբագործուած եւ Տիրոջ մարմինին ու արեան փոխակերպուած նշխարն ու գինին կը կոչէ՝ «Սուրբ Հաղորդութիւն»: Սուրբ Հաղորդութիւնը սովորական հաց չէ, այլ՝ Տիրոջ մարմինն է. *«Ով որ անարժանութեամբ կ'ուտէ եւ կը խմէ՝ այդ ուտելովն ու խմելովը ինքզինք դատապարտութեան կ'ենթարկէ, քանի որ զանազանութիւն չի դնէր սովորական հացին եւ Տիրոջ*

մարմինին միջեւ» (Ա.Կր 12.29): Առաքեալը հացն ու գինին Տիրոջ մարմինն ու արիւնը կը կոչէ (Ա.Կր 11.24-25): Յիսուս եւս իր օրհնած հացին համար կ'ըսէ՝ *«իմ մարմինը»* (Մտ 26.26: Մր 14.22: Ղկ 22.19), եւ իր օրհնած գինիին համար՝ *«իմ արիւնս»* (Մտ 26.28: Մր 14.24): Սուրբ Հաղորդութիւնը Աստուծոյ Նոր Ուխտն է, որ Յիսուսի անունով ու արիւնով կը կնքուի (Ա.Կր 12.25: Մր 14.24: Մտ 26.28): Սուրբ Հաղորդութիւնը *«ճշմարիտ կերակուր»* եւ *«ճշմարիտ խմելիք»* է. *«Մարմինս ճշմարիտ կերակուր է եւ արիւնս՝ ճշմարիտ խմելիք»* (Յհ 6.55):

2) Ինչո՞ւ համար եկեղեցին «Սուրբ Հաղորդություն» կը կոչէ սրբագործուած եւ Տիրոջ մարմինին ու արեան փոխակերպուած նշխարն ու գինին:

Որովհետեւ, Սուրբ Հաղորդութիւնը մեզ հաղորդութեան եւ հաղորդակցութեան մէջ կը դնէ Քրիստոսի հետ: Երբ Սուրբ Հաղորդութիւն կ'առնենք՝ Քրիստոսն է որ մեր մէջ կ'առնենք, եւ մենք՝ Քրիստոսի մէջ կը մտնենք: Յիսուս կ'ըսէ. *«Ով որ մարմինէս կ'ուտէ եւ արիւնէս կը խմէ՝ մէջս կը բնակի եւ ես՝ անոր մէջ»* (Յհ 6.56): Համաձայն Տիրոջ այս խօսքին, Սուրբ

Հաղորդութիւնը մեզ կը բնակեցնէ Յիսուսի մէջ եւ Յիսուսը՝ մեր մէջ. այլ խօսքով, Սուրբ Հաղորդութիւնը մեզ կը դարձնէ բնակիչ ու բնակարան Յիսուսի: Յիսուս առիթով մը ինքզինք նմանցուց որթատունկի, իսկ մեզ՝ իր վրայ հաստատուած եւ իրեն միացած ճիւղերու (Յհ 15.5): Դուք գիտէք որ որթատունկի վրայ հաստատուած ճիւղերը կը ներծծեն ու իրենց մէջ կ'առնեն նոյն այն կեանքը՝ որ կը գտնուի նոյնինքն որթատունկին մէջ: Նոյնը կ'ընէ Սուրբ Հաղորդութիւնը. երբ հաւատքով ճաշակենք՝ կը ներծծենք եւ մեր մէջ կ'առնենք ինչ որ Յիսուսի մէջ կայ: Այո՛, երբ

մեղքերու խոստովանութեամբ
մաքրենք մեր սիրտերը, եւ հա-
ւատքով ու խոնարհութեամբ ճա-
շակենք Տիրոջ մարմինն ու
արիւնը՝ այն սրբութիւնն ու մաք-
րութիւնը, այն բարի հոգին ու բա-
րի սիրտը որ Յիսուսի մէջ է՝ այդ
բոլորը մեր մէջ կ'անցնին, եւ մենք
կը սկսինք Յիսուսի կեանքին նման՝
կեանք ունենալ, անոր սրտին
նման՝ սիրտ ու հոգիին նման՝
հոգի՝ Բայց դժբախտաբար, այսօր
որքան մարդիկ կան, որոնք Սուրբ
Հաղորդութիւն կը ստանան եւ
իրենք ռեւէ հաղորդութիւն ու
հաղորդակցութիւն չունին Յիսու-
սի հետ: Չըլլանք այդպիսին:

3) Ի՞նչ կ'ընեն Սուրբ Հաղորդութիւնը:

Մեզի մեղքերու թողութիւն կը շնորհէ (Մտ 26.28): Արդարեւ, երբ մեղքերու քաւիչ Յիսուսի մարմինն ու արիւնը կը ճաշակենք՝ մեղքերու թողութիւն ձեռք կը ձգենք:

Մեզ մէկ հացի ու մէկ մարմինի կը վերածէ. *«Մենք բոլորս մէկ հաց, մէկ մարմին ենք, որովհետեւ նոյն եւ միակ հացէն կը ճաշակենք»* (Ա.Կր 10.17): Տիրոջ մարմինն ու արիւնը հաւատացեալները մաքրելու եւ զանոնք քով-քովի բերելու ու մէկ մարմինի վերածելու գորութիւնը ունի:

Յաւիտեան ապրելու զօրութիւն կը շնորհէ մեզի (Յհ 6.58), այլ խօսքով՝ Յաւիտենական կեանք կու տայ մեզի (Յհ 6.53-54): Երբ Յաւիտենականը կ'առնենք մեր մէջ՝ բնական է որ յաւիտենական կեանք ունենանք:

Մեզ կը պատրաստէ արդարներու յարութեան (Յհ 6.54): Տիրոջ մարմինն ու արիւնը հաւատքով ճաշակելը մեզ կ'արդարացնէ, եւ արդար մարդոց հետ յարութիւն առնելու արժանի կը դարձնէ:

Մեզ կը բնակեցնէ Յիսուսի մէջ եւ Յիսուսը՝ մեր մէջ (Յհ 6.56): Պէտք է հաւատանք, թէ երբ կը ճաշակենք Տիրոջ մարմինն ու

արիւնը՝ ան մուտք կը գործէ մեր սրտէն ու հոգիէն ներս, եւ մենք մուտք կը գործենք՝ իր սրտէն ու հոգիէն ներս:

Յիսուսով ապրիլ կու տայ մեզի (Յհ 6.57): Երբ կը ճաշակենք Տիրոջ մարմինն ու արիւնը՝ մեր մէջ կ'առնենք Տէրը, եւ ան կը սկսի մեր մէջ ապրիլ, եւ եթէ մեր մէջ կ'ապրի՝ ինքնաբերաբար մենք իրմով կը սկսինք ապրիլ:

Անոր ճաշակումը մեզի ուրախութիւն եւ մաքուր սիրտ կու տայ (Գրծ 2.46): Յիսուս երկինքի ուրախութիւնն է. երբ կը ճաշակենք իր մարմինն ու արիւնը՝ երկինքի ուրախութեամբ է որ կը լեցուինք:

4) Ի՞նչպէս պատրաստուիլ Սուրբ Հաղորդութեան:

ա) Խոստովանութեամբ: Մեղքը կեղտ է, աղտ է, պղծութիւն է, բիծ է: Խոստովանիլ մեր մեղքերը կը նշանակէ՝ հեռացնել մեր սրտէն ու հոգիէն մեղքի աղտն ու պղծութիւնը: Գիտէ՞ք ինչ ըրած կ'ըլլանք եթէ ճաշակենք Տիրոջ մարմինն ու արիւնը առանց մեղքերու խոստովանութեան. Տիրոջ սուրբ մարմինն ու արիւնը առած կ'ըլլանք մեղքի կեղտով ու պղծութեամբ լեցուն մեր սիրտերուն ու հոգիներուն մէջ, եւ սա Տիրոջ հայեացքով աններելի է: Եթէ մէկը իր տունը

ցեխով ու գարշելի բաներով լեցնե-
ել քեզի ըսէ՝ *«եկուր եւ տանս մէջ
բնակիր»*, պիտի ընդունէի՞ր: Արդ,
եթէ մենք մեղաւոր ու անպիտան
ըլլալով չենք ընդունիր բնակիլ
աղտոտ տան մը մէջ, հապա Քրիս-
տոս որ սուրբ ու անմեղ է, ի՞նչպէս
կրնայ ընդունիլ բնակիլ մեղքով
աղտոտած սիրտերու մէջ: Ամէն
ով որ կ'ուզէ Տիրոջ մարմինն ու
արիւնը ճաշակել, պէտք է մեղքե-
րու խոստովանութեամբ ինքզինք
մաքրէ: Ինչպէս հիւանդը նախ իր
հիւանդութիւնը կը խոստովանի,
եւ անկէ ետք միայն դեղ կ'առնէ ու
կը բժշկուի, նոյնպէս ալ, պէտք է
նախ մեր մեղքերը խոստովանինք

եւ անկէ ե՛տք միայն ճաշակենք
Տիրոջ մարմինն ու արիւնը, որ-
պէսզի բժշկութիւն ձեռք ձգենք:

բ) Ինքնաքննութեամբ: Սուրբ
Հաղորդութիւն ստանալէ առաջ,
քննե՛նք մեր հաւատքը եւ հարց
տանք մենք մեզի.- Իսկապէս կը
հաւատա՞նք որ սուրբ Պատարագի
ժամանակ սրբազործուած հացն
ու գինին Տէր Յիսուսի մարմինն
ու արիւնն են, թէ՛ Սուրբ Հաղոր-
դութիւն ստանալը չոր սովորու-
թեան մը վերածուած է մեզի հա-
մար: Ողոյս առաքեալ կ'ըսէ. *«Ամէն
մարդ նախ ինքզինքը թող քննէ եւ
ապա միայն այս հացէն ուտէ եւ
բաժակէն խմէ, որովհետեւ ով որ*

*անարժանութեամբ կ'ուտէ եւ կը
խմէ՝ այդ ուտելովն ու խմելովը
ինքզինք դատապարտութեան կ'են-
թարկէ, քանի որ զանազանութիւն
չի դնէր սովորական հացին եւ Տի-
րոջ մարմինին միջեւ» (Ա.Կր
12.28-29): Քննենք մեր անձերը: Իս-
կապէս կը հաւատա՞նք որ Սուրբ
Հաղորդութիւնը Աստուծոյ մար-
մինն է եւ ո՞չ թէ սովորական հաց:
Կը հաւատա՞նք որ Սուրբ Հաղոր-
դութիւն ստանալով կը սրբութիւնք
ու Սուրբին բնակարան կը դառ-
նանք: Կը հաւատա՞նք որ Սուրբ
Հաղորդութեան ստացումով մենք
կը դառնանք Աստուծոյ զաւակ-
ներ եւ Աստուած կը դառնայ մեզի*

Հայր: Կը հաւատա՞նք թէ երբ կը ճաշակենք Տիրոջ մարմինն ու արինը՝ զԱստուած է որ կը համբուրենք ու կը շօշափենք: Կը հաւատա՞նք որ Սուրբ Հաղորդութիւնը՝ Քրիստոսի սիրտն է, եւ ուստի՝ զայն ճաշակելը՝ Աստուծոյ սիրտը մեր մէջ առնել կը նշանակէ, եւ Աստուծոյ սրտին մէջ խորասուզուիլ կը նշանակէ: Կը հաւատա՞նք թէ Սուրբ Հաղորդութիւն ստանալը՝ Բարձրեալը բարձրացնել եւ Բարձրեալին կողմէ բարձրացուիլ է, Աստուծմով պարուրուիլ է, Սուրբին սրբութեամբ սրբուիլ է, մեր սիրտերուն մէջ Քրիստոսի իշխանութիւնը ճանչնալ է:

գ) Աղօթքով: Եթե խոստովանութիւնը մեր սրտի ծառին մեղքի ճիւղերը կը յօտե, ապա աղօթքը՝ այդ ծառին վրայ նոր ճիւղեր կը պատուաստե, եւ անոնք են՝ սիրոյ ու հաւատքի ճիւղեր, հեգութեան ու խոնարհութեան ճիւղեր, բարի ու բարեբեր ճիւղեր: Ոեւէ անձ որ կ'ուզէ ճաշակել Տիրոջ մարմինն ու արիւնը՝ պէտք է յիշեալ ճիւղերը ունենայ իր սրտին մէջ: Եթե խոստովանութիւնը մեր սիրտը կը մաքրէ մեղքի փուշերէն, ապա աղօթքը՝ զանհկա կը լեցնէ ու կը զարդարէ առաքիւնութիւններով: Եթե խոստովանութիւնը մեր սրտի դռնէն դուրս կը դնէ խաւարը,

ապա աղօթքը՝ մեր սրտի դռներն
ներս կը մտցնէ երկինքի լոյսը:
Աղօթքը մեր սրտին դուռն է. ա-
ղօթքը իբրեւ դուռ ունեցող սի՛րտը
միայն կրնայ ճաշակել Աստուծոյ
Որդիին մարմինն ու արիւնը եւ
լեցուիլ ու փոխակերպուիլ անոնց-
մով: Աղօթքը ցանկապատն է մեր
հոգիներուն ու միտքերուն. ինչպէս
ցանկապատ չունեցող պարտէզը
բաց կ'ըլլայ կենդանիներուն դի-
մաց, որոնք կրնան հոն մտնել եւ
աւեր գործել, նոյնպէս ալ, այն հո-
գիներն ու միտքերը որոնք աղօթ-
քը չունին իբրեւ ցանկապատ, են-
թակայ են չար ոգիներուն մուտքին
ու ազդեցութեան. նման պարա-

գայի, Տիրոջ մարմինն ու արիւնը ճաշակելը՝ օգուտէն աւելի՝ վնաս կը բերէ մեզի:

դ) Ծոմապահութեամբ: Ի՛նչ գեղեցիկ բան է ծոմապահութիւնը Սուրբ Հաղորդութեան ստացումէն առաջ. նիւթական հացէն դատարկուիլ եւ Աննիւթական Հացով լեցուիլ է. երկրայինէն մերկանալ ու Երկնաւորը մեր մէջ առնել է. մարմնաւորէն հեռանալ եւ Անմարմինին մարմինը մեր մէջ բովանդակել է: Ծոմապահութեամբ Սուրբ Հաղորդութիւն ստացող մարդուն մէջ՝ Աստուծոյ թագաւորութիւնն է որ կը հաստատուի, Քրիստոսի իշխանու-

թիւնն է որ կը հռչակուի, երկնային հուրն է որ երկրաւորներու կը հայի ու մեզ կը մաքրէ: Խիստ ծոմապահութիւնը կը մեռցնէ մեղաւորներու մէջ՝ մեղքն ու մեղքի սերը, եւ մեզ պատրաստ կը դարձընէ մեր մէջ առնելու մեղքերու Քաւիչ Յիսուս Քրիստոսը:

5) Ինչո՞ւ համար սխալ է Սուրբ Հաղորդութիւն ստանալէ անմիջապէս ետք եկեղեցիէն դուրս ելլելը:

Որպէսզի գիտնանք թէ ինչո՞ւ համար սխալ է Սուրբ Հաղորդութիւն ստանալէ ետք եկեղեցիէն դուրս ելլելը, նախ պէտք է գիտնալ

հետեւեալը.- Մեր սուրբ Պատարագը կը բաժնուի չորս մասի.-

ա) «Պատրաստութիւն», որ կը սկսի «Խորհուրդ խորին» երգով:

բ) «Երախայից Պատարագ» կամ «Պաշտօն Ճաշու»:

գ) «Հաւատացելոց Պատարագ» կամ «Բուն Պատարագ»: Երրորդ այս մասը կը կոչուի նաեւ «Սուրբ Հաղորդութեան Խորհուրդ»:

դ) «Գոհաբանութիւն եւ Արձակում»:

Հաւատացեալը պէտք է սուրբ Պատարագին ներկայ ըլլալ առաջին մասէն սկսեալ մինչեւ չորրորդ մասը, որովհետեւ, չորս մասերը մէկ ամբողջութիւն են եւ իբր այդ-

պիսին պէտք է յարգուին հաւատացեալներուն կողմէ:

Ըսինք, երբորդ մասը կը կոչուի «Հաւատացելոց Պատարագ» կամ «Բուն Պատարագ». հո՛ւ է որ հաւատացեալը կը հաղորդուի Տիրոջ մարմինով եւ արիւնով: Սուրբ Հաղորդութենէն ետք կը սկսի Պատարագին չորրորդ մասը՝ որ Գոհաբանութեան մասն է, ուր հաւատացեալը պէտք է կենայ եւ գոհութիւն ու գոհաբանութիւն յայտնէ Տիրոջ, եւ երկիւղածութեամբ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնէ իր Որդիին փրկարար ու սրբարար մարմինին ու արեան պարգեւին համար:

Մեզմէ ո՞վ երբ ճաշի հրաւիրուի, ճաշելէ անմիջապէս ետք կը ձգէ ու դուրս կ'ելլէ առանց շնորհակալութիւն յայտնելու տանտիկնոջ: Եւ կամ, ենթադրէ որ դո՛ւն մէկը ճաշի հրաւիրած ես, եւ ան ճաշասեղանէն ելլելով ուղղակիօրէն ձգէ դուրս ելլէ առանց շնորհակալութիւն յայտնելու քեզի, անհանգիստ պիտի չըլլայի՞ր, նախատուած պիտի չզգայի՞ր: Անշո՛ւշտ: Արդ, մենք ալ նոյն ձեւով չվարուինք Աստուծոյ հետ: Ամէն սուրբ Պատարագի մեր երկնաւոր Հայրը մեզ կը հրաւիրէ որ ճաշակենք իր Որդիին մարմինը եւ արիւնը: Ճաշակելէ անմիջապէս

ետք եկեղեցիէն դուրս չելլենք, այլ
հոն մնանք եւ փառք ու շնորհակա-
լութիւն յայտնենք մեր Աստուծոյն
այս մեծ Պարգեւին ու երկնաւոր
հրաւերին ու ընթրիքին համար:
Փառք ու շնորհակալութիւն յայտ-
նենք Յիսուսին, որ երբ ժամանա-
կը հասաւ որ երկինք մեկնէր՝ իր
մարմինն ու արիւնը թողուց երկրի
վրայ, անոնցմով մեզ ու ողջ երկի-
րը օրհնելու համար:

6) Պէ՛տք է ամէն Պատարագի
Սուրբ Հաղորդութիւն ստանալ:

Անշուշտ: Ինչպէս ամէն առտու
մեր երեսը լուալու կարիքը կը

զգանք, այնպես ալ, ամէն Կիրակի
մեր սիրտն ու հոգին պէտք է
լուանք Տիրոջ մարմինով ու արիւ-
նով: Դարձեալ, ինչպէս ամէն օր
կը կերակրենք մեր մարմինը, որ-
պէսզի անիկա զօրաւոր մնայ եւ
գործէ, այնպէս ալ, ամէն Կիրակի
պէտք է կերակրենք մեր սիրտն ու
հոգին Տիրոջ մարմինով ու արիւ-
նով: Արդարեւ, Սուրբ Հաղորդու-
թիւնը կերակուրն է մեր սրտին ու
հոգիին: Տակաւին, Սուրբ Հաղոր-
դութիւնը զօրութիւն կու տայ մե-
զի կռուելու մեղքին դէմ, եւ մենք
ամէն օր կարիքը ունինք այդ զօ-
րութեան. ուստի, պէ տք է ամէն
սուրբ Պատարագի հաղորդուիւնք:

Սուրբ Հաղորդութիւնը կը սրբէ ու կը մաքրէ մեզ. ամէն օր սրբուելու ու մաքրուելու կարիքը չունի՞նք. եթէ կարիքը ունինք՝ գոնէ շաբաթը անգամ մը պէտք է Սուրբ Հաղորդութիւն ստանանք: Սուրբ Հաղորդութիւնը կը պաշտպանէ մեզ Չարին յարձակումներուն դէմ. մենք ամէն օր պաշտպանութեան պէտք չունի՞նք. վստահաբար, ուստի, անհրաժեշտ է որ ամէն սուրբ Պատարագի՝ Սուրբ Հաղորդութիւն ստանանք, որպէսզի պաշտպանուած ըլլանք Չարին դէմ: Եթէ սուրբ Պատարագի ներկայ ըլլանք եւ սակայն Սուրբ Հաղորդութիւն չստանանք, կը նմանինք այն մար-

դուն որ ճաշի կը հրաւիրուի եւ սակայն սեղանէն անօթի կ'ելլէ, կամ այն մարդուն՝ որ առատահոս աղբիւրի մը կ'երթայ բայց ծարաւ տուն կը դառնայ:

7) Տիրոջ մարմինն ու արիւնը ճաշակելը կրնա՞յ մեր դատապարտութեան պատճառ դառնալ:

Այո՛, հաստատապէս: Պօղոս առաքեալ կը վկայէ, թէ *«նվ որ անարժանութեամբ կ'ուտէ եւ կը խմէ՝ այդ ուտելովն ու խմելովը ինքզինք դատապարտութեան կ'ենթարկէ, քանի որ զանազանութիւն չի դնէր սովորական հացին եւ*

Տիրոջ մարմինն միջև» (Ա.Կր 12.29): Դուք գիտե՞ք թե առաքելալը խօսքը շարունակելով կը պարզե թե իր ժամանակ, անոնք որոնք Տիրոջ մարմինն ու արիւնը կը ճաշակէին անարժանութեամբ՝ կը հիւանդանային եւ նոյնիսկ կը մեռնէին: Տեսէք թե ի՞նչ կ'ըսէ այս մասին. *«Այս է ահա պատճառը, որ ձեր մէջ բազմաթիւ հիւանդներ եւ ցաւագարներ կան եւ բազմաթիւ են նաեւ անոնք՝ որ նոյն պատճառով մեռան: Եթէ երբեք մենք մեզ քննէինք, չէինք պատժուեր»* (Ա.Կր 11.30-31): Տիրոջ մարմինն ու արիւնը սուրբ են ու կը սրբեն մեզ. եթէ անսուրբ, այլ խօսքով՝

անմաքուր սիրտով ու հոգիով մօտենանք անոնց՝ կրնանք պատժւիլ եթէ ոչ երկրի վրայ, բայց դատաստանի օրը՝ անպայման: Պէտք չէ անարժանութեամբ մօտենանք Սուրբ Հաղորդութեան՝ որ կրնայ մեզ արժանի դարձնել յաւիտենական կեանքին եւ երկինքի արքայութեան: Պէտք չէ անկենդան հաւատքով մօտենալ մեր կենդանի Փրկիչին՝ կենդանի մարմինին ու արեան, որուն ճաշակումով մեր հոգին կրնայ կենդանանալ: Մեր սրտի հաւատքն ու հոգիի ծարա՛ւն է որ մեզ պէտք է առաջնորդեն Տիրոջ մարմինի ու արեան ճաշակումին:

8) Սուրբ Հաղորդութիւն առնելը սովորութիւն ընելը լա՞ւ է:

Սուրբ Հաղորդութիւն ստանալը մեզի համար պէտք չէ գուտ սովորութիւն դառնայ, այլ պէտք է հաւատքի արդիւնք ըլլայ: Հաւատքի կրա՛կն է որ պէտք է մեզ մօտեցնէ Տիրոջ մարմինին ու արեան: Մեր հոգեւոր կեանքին մէջ, ոեւէ բան որ չոր սովորութեան կը վերածուի՝ իր արժէքն ու նշանակութիւնը կը կորսնցնէ: Օրինակ, եթէ եկեղեցի գալը չոր ու ցամաք սովորութեան վերածած ենք, եւ Աստուծոյ հետ հանդիպում ունենալու փափաք չունինք, եւ անկէ

պարգևւ մը կամ օրհնութիւն մը ստանալու յոյսը չունինք՝ եկեղեցի մեր մտնելը ո՛չ մէկ իմաստ կ'ունենայ: Կամ, եթէ սուրբ Պատարագին մասնակցիլը սովորութեան մը արդիւնք է եւ ո՛չ թէ Տիրոջ մարմինին ու արեան հանդէպ ճշմարիտ հաւատքի պտուղ՝ ոչինչով կ'օգտուինք: Հետեւաբար, զգոյշ ըլլանք, սովորութիւնը լաւ բան է, բայց եթէ անիկա պարպուի իր նշանակութենէն՝ ո՛չ թէ օգուտ, այլ՝ վնաս կը հասցնէ: Ուստի, սովորութիւն մը յարգած ըլլալու համար չմօտենանք Տիրոջ մարմինին ու արեան, այլ մօտենանք այն հաւատքով ու վստահութեամբ,

որ երբ կը հաղորդուինք՝ Քրիստոսն է որ կ'առնենք մեր մէջ, Արքան ու անոր արքայութիւնն է որ կ'առնենք մեր մէջ, փառաւոր Աստուածն ու Աստուծոյ փառքն է որ կ'առնենք մեր մէջ: Սուրբ Հաղորդութիւն ստանանք այն հաւատքով ու վստահութեամբ՝ որ մենք կը վերածուինք Սուրբ Հոգիով լեցուն երկնային տաճարի, կը դառնանք ժառանգորդ ու ժառանգակից Քրիստոսի, կը քառուին մեր մեղքերը եւ կը դառնանք զաւակները մեղքերու քաւիչ Տէր Յիսուս Քրիստոսին, եւ հաւատացեալներուն հետ կը կազմենք մէկ հաց ու մէկ մարմին (Ա.Կր 10.17):

Երկու Վկայութիւն Հայրերէն

«Հացին եւ Գինիին մօտենալով
մենք Քրիստոսի՛ է որ կը մօտե-
նանք, անո՛ր է որ կը տեսնենք, կը
շօշափենք, կը համբուրենք, մեր
ներսիդին կ'ընդունինք, եւ կը դառ-
նանք մարմին եւ անդամ Քրիս-
տոսի եւ զաւակներ Աստուծոյ»
(Յովհաննէս Մանդակունի):

«Հացն ու Գինին Սուրբ Պատա-
րագի ժամանակ կը փոխարկուին
Քրիստոսի մարմնիին եւ արեան»
(Գրիգոր Տաթեւացի եւ Ներսէս
Լամբրոնացի):